

Ռոզա Լիկսոմ

**ԳՆԱՑՔԱԽՑԻԿ**  
**N 6**

ՎԵՊ

**Թարգմանիչներ՝**  
**Կարինե և Ալեքսանդր Աղաբեկյաններ**



**Գ Ի Տ Ա Ն Ք**  
**Երևան 2019**



This work has been published with the  
financial assistance of  
FILI – Finnish Literature Exchange

Թարգմանված է անգլերենից և ֆրանսերենից  
Rosa Liksom, Compartment No. 6 (Hytti nr 6)

## Լիկսոմ, Ռոզա

**ԳՆԱՑՔԱԽՑԻԿ N 6 – Վեպ, Եր.: Գիտանք, 2019, 124 էջ.**

Հայերեն գրեթե չկան գրված կամ թարգմանված վեպեր փլուզվող Խորհրդային Միության վերջին տարիների մասին: Այս վեպը պատմում է բախտի բերումով գնացքակառքի նույն խցիկում հայտնված ճամփակիցների՝ երիտասարդ ֆիննուհու և ռուս տղամարդու երկար համատեղ ճամփորդության մասին Մոսկվայից Ուլան Բատոր: Հագեցած է Սիբիրի և 80-ականների վերջին Խորհրդային Միությունում տիրող իրավիճակի վառ պատկերներով: Բայց առաջին հերթին ռուս մարդու մտածելակերպի և ֆինն աղջկա ու ռուս տղամարդու հարաբերությունների մասին է: Վեպը համեմված է ռուս *մուժիկի* հայիոյախառն բառապաշարով և հեղինակի կոշտ մեկնաբանություններով Խորհրդային Միության վերաբերյալ:

Այս վեպը (Hytti nr 6) 2011 թվին ստացել է *The Finlandia Prize* Ֆինլանդիայի ամենահայտնի գրական մրցանակը և 2013 թվին ներառվել է Ֆրանսիայում (Compartment n° 6, Gallimard) **Prix Médicis étranger** մրցանակի կարճ ցուցակում: Ռոզա Լիկսոմի գրած վեպերն արժանացել են բազմաթիվ այլ գրական մրցանակների և թարգմանվել են տասնինը լեզվով:

ISBN 978-9939-810-45-4

Published by agreement with Hedlund Agency.

© Rosa Liksom 2011

English Translation © Lola Rogers 2014

© Գիտանք, թարգմանության և ձևավորման համար, 2018

Մոսկվան կուչ էր եկել մարտի երեկոյի չոր ցրտաշունչ օդում՝ պաշտպանվելով մայր մտնող բոսոր արևի սառը հպանքից: Աղջիկը բարձրացավ գնացքի վերջին կառքը, գտավ վեցերորդ գնացքախցիկը և խոր շունչ քաշեց: Այստեղ չորս պառկելատեղ կար, վերևի երկուսը փակ էին, ներքևի գլխատեղերի միջև սեղանիկ էր, որը ծածկված էր սպիտակ սփռոցով. ճկազանգված ծաղկամանում խունացած վարդագույն թղթյա մեխակ կար: Դռան վերևի բեռնախորշը լեփ-լեցուն էր անփութորեն կապկպված հակերով: Նա տեղավորեց Ջախարի տված հին ճամպուուկը նեղ կոշտ պառկելատեղի տակ գտնվող մետաղյա արկղում և գցեց ուսապարկը պառկելատեղին: Հնչեց առաջին զանգը. աղջիկը դուրս եկավ միջանցք ու կանգնեց լուսամուտի մոտ՝ ներշնչելով գնացքին բնորոշ՝ երկաթի ու ածխափոշու, տասնյակ քաղաքների ու հազարավոր մարդկանց թողած հոտը: Ուղևորներն ու ճանապարհողները խցկվելով անցնում էին նրա մոտով՝ հրելով պայուսակներով և ուղեբեռներով: Նա հպեց ձեռքը սառն ապակուն ու նայեց կառամատույցին: Այս գնացքը նրան կտանի աքսորյալներով բնակեցված գյուղերի, բաց կամ փակ սիբիրյան քաղաքների միջով մինչև Ուլան Բատոր՝ Մոնղոլիայի մայրաքաղաքը:

Երբ հնչեց երկրորդ զանգը, աղջիկը տեսավ կառամատույցին պնդակազմ, լոշտականջ մի տղամարդու՝ սև բամբակաբաճկոնով ու սպիտակ մորթե ականջավոր գլխարկով. կողքին կանգնած էին մի գեղեցիկ սևահեր կին ու մի դեռահաս տղա, որը ոչ մի քայլ չէր հեռանում կնոջից: Կինն ու տղան հրաժեշտ տվեցին տղամարդուն և թևանցուկ վերադարձան կայարանի շենքը: Տղամարդը միառժամանակ նայում էր ցած, ապա մեջքով դարձավ սառը քանոն, տրորեց *Բելոմորի* ծայրը, սեղմեց շուրթերով, վառեց ու մի քանի անգամ ազահաբար ներս քաշեց ծուխը, հետո ներբանով ճզմեց ծխուկը գետնին և մնաց կանգնած՝ ցրտից սրթսրթալով: Հնչեց երրորդ զանգը, և տղամարդը ներս ցատկեց գնացք: Աղջիկը տեսավ, որ նա օրորվելով քայլում է միջանցքով, և հույս ուներ, որ տղամարդը չի մտնի նրա խցիկը: Իզուր:

Մի փոքր հապաղելով՝ աղջիկը վերադարձավ խցիկ և նստեց իր պառկելատեղին տղամարդու դիմաց, որը ցուրտ էր տարածում իր շուրջը: Երկուսն էլ լուռ էին: Տղամարդը խժժոռ նայում էր աղջկան, աղջիկն անվստահ սևեռվել էր թղթե մեխակին: Գնացքը ցնցվեց ու շարժվեց, խցիկի ու միջանցքի ճկազանգված բարձրախոսներից հնչեց Շոստակովիչի ութերորդ լարային քառյակը:

Հետևում մնում էր ծնեռային Մոսկվան՝ երեկոյան արևով տաքացվող պողպատափայլ կապույտ քաղաքը: Հետևում մնում էին քաղաքի լույսերն ու

խլացուցիչ երթևեկությունը, եկեղեցիների շուրջպարը, դեռահաս տղան ու մի կողմն այտուցված դեմքով գեղեցիկ սևահեր կինը: Հետևում մնում էին հազվադեպ գովազդների նեոնե լույսերը, որոնք փայլում էին մռայլ մութ երկնքի հետնապատկերին, Կրեմլի սուտակե աստղերը, բարի Լենինի ու չար Ստալինի զմռսված մարմինները և Միտկան, հետևում մնում էին Կարմիր հրապարակն ու Լենինի դամբարանը, ԳՈՒՄ-ի պարուրած սանդուղքների թուջե ցանցկեն բազրիքները, օտարերկրացիների *Ինտուրիստ* հյուրանոցը՝ արտարժույթով սպասարկող գինեսրահներով և հարկերի խոժոռադեն սպասուհիներով, որոնք զբաղեցնում էին մաքրելու պարագաների սենյակները և հետաքրքրվում էին էլեկտրական սափրիչներով, օժանելիքներով և գեղեցկության միջոցների արևմտյան արտադրանքով: Հետևում մնում էր Մոսկվան՝ Իրինան, Պուշկինի հուշարձանը, օղակաձև զբոսայգին, Սաղոյոյե կոլցոն և մետրոյի օղակաձև գիծը, ստալինյան պողոտաները, արևմտյան ոճով կառուցված բազմագոտի Նոր Արբատը, Յարուսլավլի մայրուղին և փայտաշեն ամառանոցների փորագրազարդերը, ուժասպառ, վերահերկված հողը:

Լուսամուտի կողքով սրընթաց անցավ հարյուր մետրանոց դատարկ ապրանքատար գնացքը: Սա դեռևս Մոսկվան է. ցեխոտ փոսերում իրար դիզված՝ աղոտ լույս արձակող սառած լուսամուտներով տասնինը հարկանի հավաքովի շենքեր, անվերջ շինարարություն, բաց որմնախորշերով կիսակառույց բարձրահարկ շենքեր: Շուտով դրանք էլ կդառնան լոկ հեռավոր ուրվապատկերներ: Իսկ սա արդեն Մոսկվան չէ՝ ծյան բեռից փլված տուն, քամուց ճոճվող վայրի ու սառած սոճուտ, ծյան վերմակով ծածկված բացատ, հողմացուցի տակ պաշարված թույլ գուրոշի, մթություն, միայնակ տնակ սպիտակ անապատի մեջտեղում, այգիում՝ վայրիացած խնձորենի, եղամապատ եղևնիներ ու կեչիներ, տների բարձր ցանկապատեր, ծոված ցախանոց: Առջևում անծանոթ սառցապատ Ռուսաստանն է, գնացքը սուրում է խոնջացած երկնքի տակ, որտեղ նշմարվում են փայլատակող աստղերը, դուրս է թռչում բնության գիրկն ու հայտնվում անասող երկնքով լուսավորված ճնշող խավարում: Ամեն ինչ շարժվում է՝ ծյունը, ջուրը, օդը, անտառը, ամպերը, քամին, քաղաքները, գյուղերը, մարդիկ ու մտքերը: Գնացքը շառաչելով սլանում է ամայի ծյունասույզ երկրի միջով:

Աղջիկը լսում էր տղամարդու ծանր ու հանգիստ շնչառությունը: Իսկ նա նայում էր իր խոշոր և ուժեղ ձեռքերին: Ներքևում հենց գետնի մոտ արագ անցնում էին ազդանշանի լույսերը: Երբեմն հարևան երկաթգծերին կանգնած կառքերը ծածկում էին բնատեսարանը, երբեմն էլ լուսամուտից այն կողմ տարածվում էր ռուսական հողի գիշերային մթությունը, և տեղ-տեղ երևում էին աղոտ լուսավորված տները:

Տղամարդը բարձրացրեց հայացքը, խորաթափանց հայացքով երկար զննեց աղջկան և թեթևացած ասաց.

- Դե ինչ, մենք միայն երկուսով ենք: Եվ փայլուն երկաթգծերը մեզ տանում են Աստժո սառցարան:

Խցիկի դռան մոտ հայտնվեց տարեց հաստիկի համազգեստավոր ուղեկցորդուհին և նրանց մեկնեց մաքուր սավաններ ու սրբիչներ:

- Հատակին չքթել: Միջանցքը մաքրում են օրը երկու անգամ: Ձեր անձնագրերը, խնդրեմ:

Փաստաթղթերը ստանալով՝ ուղեկցորդուհին քնննադեղեց ու գնաց: Տղամարդը գլխով արեց նրա հետևից:

- Պառավ Ռաիսան այստեղ ուստիկան է: Բոլոր հարբեցողներն ու մարմնավաճառները վախենում են նրանից: Ավելի լավ է նրան չհակաճառել: Ռաիսան կառքը տաքացնող աստվածուհին է: Պետք է հիշել:

Տղամարդը հանեց գրպանից սև կոթով ծալովի դանակ, ազատեց պահպանակն ու սեղմեց կոճակը: Կոթից մետաղական չխկոցով դուրս թռավ շեղբը: Տղամարդը զգուշորեն դրեց դանակը սեղանին, հանեց պայուսակից մի մեծ կտոր *Ռոսիյսկի* պանիր, մի բոքոն սև հաց, մի շիշ կեֆիր ու մի աման թթվասեր: Ի վերջո պայուսակի կողմի գրպանից հանեց թուև վարունգով կաթացող փաթեթ և ազահաբար սկսեց մի ձեռքով բերանը խցկել հացը, իսկ մյուսով՝ թուև վարունգը: Ուտելուց հետո հանեց բրդյա գուլպայից գոլ թեյով մի շիշ: Այնուհետև երկար զննեց աղջկան: Նրա հայացքում նախ հակակրանք երևաց, ապա անհազ հետաքրքրասիրություն և, վերջապես, հավանության պես մի բան:

- Ծանոթանանք, - ասաց տղամարդը, - ես զողող եմ ու ամեն ինչ անող բանվոր շինարարությունում: Ծնունդով Մոսկվայից եմ, անուն հայրանունս Վադիմ Նիկոլակիչ Իվանով է, Ձեզ համար՝ պարզապես Վադիմ: Թեյ կուզե՞ք: Մի երկու փոքր բաժակ. մեջը վիտամին կա, դուր կգա: Արդեն մտածում էի, թե որ արարքիս համար եմ հայտնվել վանդակում էստո՞նուհու հետ: Բայց *Ֆինլանդսկայա ռեսպուբլիկայի* և *Էստոնսկայա սովետսկայա ռեսպուբլիկայի* միջև մեծ տարբերություն կա: Էստոնացիները կեռաքիթ նացիստներ են, իսկ ֆինները նույն նյութից են, ինչ որ մենք: Ֆինլանդիան մի փոքրիկ կարտոֆիլ է՝ քարտեզի վերևի մասում: Դուք ոչ ոքի չեք խանգարում: Հյուսիսի բոլոր բնակիչները նույն ցեղից են՝ միավորված հյուսիսցու հպարտությամբ: Դուք իմ տեսած առաջին ֆիննուհին եք: Բայց Ձեր երկրի մասին շատ եմ լսել: Ասում են՝ ոգելիցն այդտեղ արգելված է:

Նա մեկնեց աղջկան մուգ թեյով բաժակը: Մինչ աղջիկը զգուշորեն համտեսում էր, տղամարդը կում առ կում խմեց իր թեյը, վեր կացավ, զցեց անկողինն ու պարկեշտորեն հանվեց՝ պահելով ներքնաշորը: Խնամքով ծալեց

ճեղ կաշվե գոտիով հաստ սև տաբատը, կոշտ գործվածքե անթև բաճկոնակն ու սպիտակ վերնաշապիկը և դրեց իր պառկելատեղի եզրին: Հետո հագավ երկնագույն զոլավոր գիշերազգեստն ու սահեց օսլայած սավանի տակ: Շուտով ծածկոցի տակից երևացին անհարմար կոշիկներից ու արհամարհական վերաբերմունքից այլանդակված՝ կեռացած ոտնամատներն ու կոշտացած, ճաքճքած կրունկները:

- Բարի գիշեր, - գրեթե շնչաց տղամարդն ու անմիջապես քնեց:

Աղջիկը երկար ժամանակ դեռ արթուն էր: Թեյի բաժակներն ու դրանց ստվերները անընդհատ շարժվում էին խցիկի կիսախավարում: Նա ցանկացավ հեռանալ Մոսկվայից, որպեսզի փոխի իր կյանքը, բայց արդեն կարոտում էր քաղաքը: Մտածում էր Միտկայի, Միտկայի մոր՝ Իրինայի, վերջինիս հոր՝ Ջախարի և իր մասին, այն մասին, թե հիմա ինչ է լինելու իրենց բուլդին: Մտածում էր իրենց ընդհանուր ամայացած տան մասին: Նույնիսկ կատունները՝ փնթի Լիկան ու կեղտոտ Ռոսկան, հեռացել էին այդտեղից: Գնացքաքարշը շչում էր, երկաթգծերի շրշյունը խառնվում էր գնացքի մետաղյա թխկթխկոցին: Տղամարդը կամացուկ խոնփացնում էր ամբողջ գիշեր: Այդ ձայնը աղջկան հիշեցրեց իր հորը և անվտանգության զգացում հաղորդեց: Միայն լուսադեմին, երբ ստվերները կարճանում էին, նա հայտնվեց սպիտակ փրփուրի մման քնի գրկում:

Երբ աղջիկը զգուշորեն բացեց աչքերը, նախ տեսավ երկու պառկելատեղի միջև ձգումներ անող տղամարդուն: Արևի նարնջագույն ցուլքերը ցատկոտում էին խցիկի փայլաների պատերին: Տղամարդը վեր կացավ ու սրբիչով սրբեց ճակատի քրտինքը: Աղջիկը հագիվ էր հասցրել նստել, երբ դուռը բախեցին, և սև համազգեստով Ռախսան դրեց սեղանին տաք գոլորշապատ թեյով երկու բաժակ, խոնավ վաֆլիներ և չորս մեծ կտոր շաքար: Տղամարդը մի քանի կոպեկ հանեց դրամապանակից, որին դրոշմված էր Վալենտինա Տերեշկովայի ուռուցիկ պատկերը՝ տիեզերագնացի սաղավարտը գլխին:

Հենց որ Ռախսան հեռացավ, տղամարդը հանեց դանակը ներքնակի տակից, ձախ ձեռքով բռնեց շաքարի կտորը, շեղբի բութ կողմով կտորեց երկու մասի և մի կեսն ու գոլորշապատ բաժակը մեկնեց աղջկան: Հետո երկչոտաբար ու տրտմազին ժպտալով՝ պայուսակից հանեց մի շիշ օղի, բաց արեց ու լցրեց երկու կապույտ գավաթիկների մեջ, որոնք հանկարծ հայտնվեցին պայուսակի խորքից:

- Մեր համատեղ ուղևորությունը երկար է տևելու, բայց բաժակաճառս կարճ կլինի: Մեր հանդիպման կենացը: Եվ աշխարհի միակ ճիշտ երկրի՝ Սովետական Միության կենացը: Սովետական Միությունը միշտ կապրի:

Նա մի շնչով կոնծեց օդին, մի կտոր կծեց մսալի սոխի գլխից ու կերավ: Աղջիկը տարավ գավաթիկը բերանին, բայց չխմեց:

Անկիրթ տղայի պես տղամարդը սրբեց շրթունքները սփռոցի ճոթով ու ժպտաց: Աղջիկը համտեսեց թեյը. բուրավետ էր ու թունդ: Այդ պահին տղամարդը նկատեց, որ աղջիկը ձեռք չի տվել իր գավաթիկին:

- Մենակ խմելը տխուր է:

Աղջիկը չարձագանքեց: Տղամարդը հիասթափված նայեց նրան:

- Չեմ հասկանում: Դե, ինչ արած: Չեմ ստիպի, թեև արժեր:

Եվ նա անշարժացավ՝ նոթերը կիտած նայելով աղջկան: Աղջկան դուր չեկավ նրա հայացքը. վերցրեց սրբիչը, ատամի խոզանակը և գնաց զուգարան՝ լվացվելու: Սպասողների հերթը լցրել էր միջանցքի կեսը: Ուղևորները տնազգեստով էին, գիշերազգեստով, մարգատաբատով, իսկ երկու տղամարդ՝ սպիտակ գինվորական փոխաններով:

Մեկ ժամ անց աղջիկը հասավ նպատակակետին: Եկավ դռան թաց կաշուն բռնակը ճանկելու նրա հերթը: Ներսը հեղձուկ գարշահոտ էր, հատակին մեզ կար ու լրագրի ճմրթված կտորտանքներ: Եվ ոչ մի կաթիլ ջուր չկար: Լվացարանին դրված էր սողայահոտ, բաց դարչնագույն տնտեսական օժանոց խնամքով կտրված երկու սալիկ: Մեկն արդեն հասցրել էր պատվել ժանգոտ լորձով: Աղջիկը լայն քայլ արեց շեմից ու բարձրացավ զուգարանակոնքին՝ ջանալով չկեղտոտել Լեւինգրադում գնված փափուկ մաշիկները, և արդեն այնտեղ առանց ջրի մի կերպ մաքրեց ատամներն ու դեմքը: Ջուգարանի փոքր լուսամուտը կիսաբաց էր: Դրա մյուս կողմով անցավ մի մոռացված, ամայի կայարան:

Տղամարդը սեղանին դրեց սև հաց, ապակե ամանով կծվիչ, սոխի և լուլիկի շերտեր, մայրնեզ, ձկան պահածոներ և պնդեփ ձվեր, որոնք խնամքով մաքրեց և կտրեց երկու մասի:

- Գոհացրու Աստծուն, և Նա քեզ չի մոռանա: Յուրասիրվիր:

Նրանք երկար նախաճաշեցին, և միայն այնժամ, երբ տղամարդը պահեց մնացած մթերքը պայուսակում ու ափով ավլեց սեղանից փշրանքները, վայելեցին հովացած թեյը:

- Անցյալ գիշեր երագիս Պետյան էր եկել: Մենք ծնվել ենք նույն տարում և դասընկերներ էինք: Հինգ ու կես տարի: Հետո ձանձրացանք դպրոցից և պետք է աշխատանք փնտրեինք: Ես սպասում էի խանութի մոտ, և հենց որ ապրանքը բերում էին, թափքից տեղափոխում էի պահեստ: Պետյան տախտակ էր կրում շինհրապարակում: Ապրում էինք հնոցարանում: Այնտեղ լուսամուտից տեսնում էինք մայթը և անցորդների ոտքերը: Մի երեկո Պետյան չվերադարձավ աշխատանքից: Հաջորդ օրը տրոլեյբուսով գնացի Պետյայի շինհրապարակ, և ինձ ասացին, որ նա ընկել է մեքենայի տակ ու մեռել: Ես

հարցրի՝ ինչ մեքենա էր: Մի ծերունի ցույց տվեց փոքր հողափորիչը: Ասաց՝ մեղավորը դա է: Ես վերցրի ծանր մուրճը և դա ջարդուխուրդ արեցի: Այդ օրվանից մենակ եմ գլուխ հանում:

Աղջիկը նայեց մտասույզ տղամարդուն և մտածեց Միտկայի ու օգոստոսի վաղ առավոտվա մասին: Պուշկինի հրապարակում բետոնե նստարանին նստած՝ իրենք թմրախոտ էին ծխում ու սպասում արևածագին, երբ հանկարծ հայտնվեցին մի խումբ հարբած դեռահասներ և սկսեցին նրանց քաշքշել ու սպառնալ: Իրենց հաջողվեց դուրս պրծնել ու վազել, բայց մի սափորագլուխ չաղո նետվեց նրանց հետևից՝ բղավելով, որ այդ ակնոցավորի ուղեղը կցրի մայթին: Նրանք սարսափահար վազում էին ամայի փողոցով, երբ հանկարծ դրա մյուս ծայրին ինքնաշարժ հայտնվեց, և աղջիկը վստահ էր, որ այնտեղ նույնպես սափորագլուխներ էին: Նրանք փախչում էին նրբանցքներով, ներքնաբակերի միջով և, վերջապես, քրտնաթաթախ հասան տուն:

- Առաջին անգամ եղել եմ Սիբիրի հարավում վաթսունականների սկզբին: Փողը փոխելու ժամանակն էր: Ռուբլին ոչ մի արժեք չուներ, նույնիսկ փողով ուտելիք չէր ճարվում, իսկ մի բաժակ գարեջուրն արժեր հիսուն կոպեկ: Հաճախ Բորիսի, Սաշայի և Մուխա շան ընկերակցությամբ գնում էի բանվորական ճաշարան՝ վռիկ ուտելու: Օրերից մի օր հայտնվեց մի պաշտոնյա ու ասաց. «Այ ընկեր, գնա Սուխուն կամ Ղրիմ, այնտեղ աշխատող ձեռքեր են պետք», ձեռքս թղթի կտոր խցկեց ու չքվեց, ասես գետնի տակն անցավ: Այդժամ գնացի Ռիմայի՝ իմ սիրելի հաստաքամակ պոռնիկի մոտ, ասացի՝ մնա բարով ու շնորհակալ եմ ձեղքիդ համար, հետո ուղղվեցի կայարան, գնացք նստեցի և ընթացա ամայի ու լայնարձակ Սովետական Միության միջով: Ի վերջո հայտնվեցի ոչ թե Սուխունում, այլ Յալթայում: Այդտեղ ամենուրեք շինարարություն կար, և հենց որ ասացի, որ ստախանովական եմ ու առաջավոր աշխատող, իսկույն աշխատանք գտա: Կյանքիս լավագույն ամառն էր: Բան չէի անում, աջուծախ շինում էի: Էն էլ ի՛նչ կանանց: Հերիք էր ասել՝ գնանք, ու նրանք տեղնուտեղը պատրաստ էին: Երբեմն գնում էի նրանցից մեկի հետ *Շինարար* կինոթատրոն, որտեղ ցուցադրում էին արկածային նկարներ՝ *Տիսայի վրա*, *Յոթ հարյուր տասներեքերորդը վայրէջք է խնդրում* և այն մեկը, իմ սիրելին՝ *Ջգուշացիոր ավտոմեքենայից*: Երբ մտածում եմ այդ ամռան մասին, թուքս վազում է: Այն ժամանակ խելքս չէր խանգարում ապրել: Բայց հետո հայտնվեց այս վերջին քածը՝ Կատենկան: ճովողում էր քաղցր-մեղր ձայնով. «Թող լվանամ վերնաշապիկդ, սիրելիս»: Կյանքս այդժամ վերջացավ. իմ առջևում միայն անուղղելի հարեցողի մութ, խորդուբորդ ճանապարհն էր:

Արևելյան քամին ցրիվ էր տալիս միայնակ ծյունափաթիլները սպիտակ



տարածությամբ, անտառի վերևում բացվում էր գունատ լույսը: Ձախ ուսի վրայով տղամարդը կատաղությամբ թքեց խցի հատակին:

- Երեկ ինձ կայարանում ճանապարհում էր հենց այդ Կատենկան: Ես եմ այլանդակել նրա դեմքը: Չարբած գալիս էի տուն, ու սկսվում էր: Այդ անգամ էլ նույն կռիվն էր, էլի տեսարան սարքեց: Ու քանի որ չկարողացավ ժամանակին կանգ առնել, մի երկու ապտակ հասցրի: Թող բերանը փակ պահեր, թող օգներ հոգնած մարդուն հանվել ու ընթրիք պատրաստեր, բայց չէ, ոչ մի կերպ չէր լռում: Միշտ փորձում եմ նրան բացատրել` ինչն ինչոց է, երբեմն նույնիսկ գովում եմ: Բայց ինձ լսելու փոխարեն նա միացրեց իր շչակն ու գոռում էր, որ տղամարդիկ շինել են այս անհիժյալ աշխարհը միայն իրենց համար: Եվ այդժամ նվաստացած ամուսնու կատաղությունս դուրս թափվեց, և դնքստեցի նրան, որ սսկվի: Երբ դա էլ չի օգնում, կարող եմ բռուցքս մխել ուղիղ մռութին: Ինձ համար հեշտ չի, սրտովս չի նրան ծեծելը, բայց չգիտես ինչու ամեն ինչ միշտ դրանով է վերջանում: Ի վերջո, ես էլ, չէ՞, բան ասելու իրավունք ունեմ. իմ սեփական տանն եմ, թեև այնտեղ հաճախ չեմ լինում:

Տղամարդը հանգամանորեն ծանր ու թեթև էր անում բառերը` մեկ առ մեկ արտասանելով: Աղջիկը ջանում էր չլսել նրան:

- Իսկ գիշերվա կեսին նրա կաչելը ընկճող է: Ջրկում է ապրելու ուրախությունից: Նախորդ գիշեր, երբ քնած էի, նա հրասայլի պես վրաս հարձակվեց: Միտքն անգամ նրա մաշված ճեղքի մասին փսխելու ցանկությունն է առաջացնում:

Կառքը տարուբերվում էր, տղամարդու մատները ցնցվում էին, աչքի անկյունում արցունք երևաց: Նա սրբեց դա ձեռքի դարձերեսով ու աչքերը փակեց, հետո կոկորդը հազալով մաքրեց, խոր շունչ առավ ու աղմուկով արտաշնչեց:

- Բայց ամեն ինչ սահման ունի: Նրան երբեք չեմ ծեծում մեր *կոմունակալի* միջանցքում, փողոցում կամ գրասենյակում: Ծեծում եմ միայն մեր սենյակում, թե չէ կհայտնվի շենքի լիազորը կամ միլիցիան, իսկ ես չեմ սիրում ոչ մեկին, ոչ էլ մյուսին, հատկապես` միլիցիային: Նաև կարևոր է, որ տղան չտեսնի, չէ՞ որ Կատենկան նրա մայրն է: Այժմ տղան արդեն մեծ է և ինքն է քոթակում իր ընկերուհուն: Ճիշտ է, դա ինձ դուր չի գալիս... Կնիկը բուրդ է. ինչքան ծեծես, էնքան կփափկի. պառավ կանայք էին ասում, երբ ես դեռ ջահել էի: Ես էլ հետևում եմ նրանց խորհրդին: Գուցե անգամ չափից շատ:

Աղջիկը նայում էր մերթ հատակին, մերթ երկնակամարին անշարժացած ամպին: Նման ռուս *մուժիկի* նա երբևէ չէր հանդիպել: Կամ հանդիպել էր, բայց չէր ցանկացել հիշել: Ոչ ոք երբևէ այդ կերպ չէր խոսել նրա հետ: Եվ այնուամենայնիվ ինչ-որ ծանոթ բան կար այդ տղամարդու լկտի ու գռեհիկ

պահվածքում, բառերը ձգելով խոսելաձևում, նրա ժպիտում, արհամարհական մեղմ հայացքում:

- Կատենկան սովորական ռուս կնիկ է՝ կոշտ է, բայց արդար: Աշխատում է, հոգ է տանում տան ու երեխաների մասին և կարող է ամեն ինչի դիմանալ: Մենք պարզապես տարբեր կերպ ենք նայում շատ բաներին: Վերցնենք, օրինակ, պառավ մորս: Նա ապրում է մեզ հետ նույն *կոմունալկայում*, և իմ կարծիքով ուղղակի հիանալի է, որ Կատենկան կարող է կերակրել մորս, - չէ՞ որ ամեն դեպքում պատրաստում է իր ու որդու համար, - կարող է աչքը վրան պահել, տանելի դարձնել նրա ծերությունը: Բայց դա հեշտ չէ: Մենք քսաներեք տարի ամուսնացած ենք, և այդ քածը անընդհատ պահանջում է, որ մորս քշեն բնակարանից:

Աղջիկը վեր կացավ, որ դուրս գնա միջանցք, բայց տղամարդը բռնեց նրա ձեռքը և ցույց տվեց պառկելատեղը:

- Լսի՛ր մինչև վերջ:

Աղջիկն արագ դուրս պրծավ ձեռքից: Տղամարդը հասավ հետևից և ամուր, բայց և մի տեսակ հայրաբար ճանկեց նրա դաստակը: Աղջիկը վայր ընկավ իր պառկելատեղի ծայրին:

Տղամարդը վերադարձավ իր տեղը, դրեց մատը շուրթերին, թեթևակի փչեց ու լայն ժպտաց:

- Դետաքրքիր բան է. փեսացուն սիրում է հարսնացուին, իսկ ամուսինը ատում է իր կնկան: Դենց որ նրանք ամուսնանում են, ամուսինը դառնում է «անասուն», իսկ կինը՝ «շան քած», և երկուսն էլ սկսում են տառապել: Կինը մտածում է, որ եթե ավելի լավ ապրեն, ապա ամեն ինչ կարգի կգա: Որ խնդիրը սեփական սալօջախն է, նոր տնազգեստը, սիրուն ծաղկամանը, անվնաս թեյամանը և ճենապակյա թեյի սպասքը: Իսկ տղամարդը մտածում է՝ եթե երբեմն այցելի պոռնիկներին, ապա ավելի հեշտ կդիմանա կնկանը: Եվ այնուամենայնիվ... Երբեմն Կատենկային նայելիս ցանկություն ունեն ասելու՝ *Կատյուշկա, ամուշիկս*: - Նա ծանր հոգոց հանեց, ձեռքը մեկնեց վարունգի փաթեթին, մեկը հանեց, կծեց և սխալմամբ կուլ տվեց ամբողջ կտորը: - Մենք՝ տղամարդիկս, ոչ մի բանի պետք չենք: Կանայք առանց մեզ ավելի լավ են գլուխ հանում: Մենք ում ենք պետք. ոչ ոքի: Գուցե միայն ուրիշ տղամարդկանց: Է՛հ, ուզում են խմել մեր ռուս կանանց եռանդի, համառության, համբերության, քաջության, կատակասիրության, խորամանկության, նենգության ու գեղեցկության կենացը: Այս երկիրը կանգուն է նրանց շնորհիվ:

Տղամարդը խցկեց ձեռքը ներքնակի տակ և շոկոլադի սալիկ հանեց, բացեց դանակի ծայրով ու հյուրասիրեց աղջկան: Իր համար կտոր չկտորեց և դրեց սալիկը սեղանին: Շոկոլադը մուգ էր և բեմզիմահոտ: Աղջկա միտքն ե-

կավ Իրինան, որ երեկոյան նստում էր իր սիրած բազկաթռռին լամպի տակ և կարդում, իսկ դեղին լույսն ընկնում էր էջերին, գիրքը պահող ձեռքերին, դեմքին և...

- Նախկինում կանայք կարողանում էին լեզուն իրենց պահել, իսկ այժմ բերանները չեն փակում: Մի պոռնիկ անընդհատ բլբլում էր ու ծխում, մինչ շինում էի նրան: Ուզում էի տեղնուտեղը նրան խեղդել:

Լուսամուտից այն կողմ ուրվագծվում էր սառնամանիքից և ուժեղ քամիներից ուժասպառ կեչուտը: Մերկ ծառերը սև ստվերներ էին գցում ձյանը: Գնացքը սլանում էր առաջ՝ առաջացնելով կուսական մաքրությամբ փայլող ձյան պտտահողմեր: Լուսամուտից մերթ երևում էր եղյամապատ սպիտակ տայգան, մերթ երկնագույն անամպ երկինքը: Աղջիկը լսում էր իր հարևանի բառերի հնչողությունն ու ձիթմը: Շուտով տղամարդու խանդավառությունը տեղի տվեց խոր տխրությանը: Երկար ժամանակ նա խորհում էր: Թաց շուրթերը շարժվում էին՝ մեկ արագ, մեկ էլ շատ դանդաղ: Նա հանկարծ կորցրեց իր խրոխտ կեցվածքը, ուսերը կռացան:

Աղջիկը հանեց պայուսակից նկարչության տետրն ու սկսեց նկարել:

Տղամարդը նայեց նրան, թեթև հոգոց հանեց ու ծուլորեն թոթվեց ուսերը:

- Կատենկա... Իմ Կատենկա... անուշիկս:

Լռություն տիրեց: Տղամարդը հենեց ճակատը սառը ապակուն: Աղջիկը վեր կացավ ու դուրս եկավ խցիկից:

Միջանցքում ուղևորներ էին կանգնած: Գնացքը թափահարելով՝ կողքով դիսկոդիսկոցով անցավ հանդիպական ապրանքատարը: Փիրուզե բժի պես փայլատակեց ու անցավ փոքր կայարանի փայտե տնակը: Գիշերը միջանցքի լուսամուտը ծածկվել էր ցեխի շերտով, որի միջով այժմ աղոտ լույս էր թափանցում: Կեչուտը նոսրացավ, գնացքը դանդաղեցրեց ընթացքը, անցավ հարևան երկաթգծերին ընկած ժանգոտ մետաղաջարդոնի մոտով և շուտով մտավ Կիրովի կայարան: Երկաթուղու մոտ տեղադրված ցուցանակը հայտնեց, որ մինչև Մոսկվա 890 կիլոմետր է:

Կառքի դուռը բաց էր, և աղջիկը կանգնեց դռնատեղում: Մի քանի ձյունափաթիլ սավառնում էր չոր, անշարժ ու սառը օդում: Հարևան երկաթգծին անհանգիստ ցնցվում էր արվարձանի հնամաշ գնացքը: Մարդիկ դուրս էին սողում դրա ընդերքից՝ շտապելով թարմ օդ շնչել: Հնչեց մեկնելու զանգը: Մեքենավարի սև ճկազանգվածե հովարն անցավ աղջկա աչքերի առաջ հենց այն պահին, երբ Ռախսան եկավ դուռը փակելու:

- Ի՞նչ ես կանգնել: Ուզում ես մնա՞լ Կիրովում: Քեզ այստեղ կխարազանեն: Ո՛չ անձնագիր ունես, ո՛չ գրանցում: Վերադարձիդ խցիկ: Ամիսեք օտարերկրացի, ոչինչ չես հասկանում, բայց քիթդ խոթում ես այստեղ: Իսկ ես պատասխանատու եմ այս դժբախտի համար: Գոնե գիտե՞ս՝ ով էր Կիրովը:

# Ռոզա Լիկսոն

## ԳՆԱՑՔԱԽՑԻԿ

N 6

վեպ

Թարգմանված է անգլերենից և ֆրանսերենից

Թարգմանիչներ՝	Ալեքսանդր Աղաբեկյան Կարինե Աղաբեկյան
Խմբագիր՝	Ալեքսանդր Աղաբեկյան
Կազմի գեղակառույցը՝	Ալեքսանդր Աղաբեկյանի

«Գիտանք» հրատարակչության հասցեն՝  
Երևան, 0002, Մաշտոցի պողոտա 36, բն.14  
հեռախոս/հեռապատճեն՝ 010 -530-629, 091-45-07-08  
Էլփոստ: [aaghabekyan@yahoo.com](mailto:aaghabekyan@yahoo.com)